Արևելյան գործընկերության տարածաշրջանում գենդերային տվյալների բացերի շտկում. արդարադատության համակարգին կանանց հասանելիությանն առնչվող տվյալների հավաքման վերաբերյալ ուղեցույց

Կանանց հասանելիությունը արդարադատությանը. գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի չափորոշիչների կիրարկում

Անն Լորե Հյումբերտ
Մասնակցությամբ՝
Թամարա Բուհայեց, Լիզա Գրիգորյան, Անդրեյ Իովու, Վաֆա Ռուստամ
Եկատերինե Սխիլաձե

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից

Արևելյան գործընկերության տարածաշրջանում գենդերային տվյալների բացերի շտկում. արդարադատության համակարգին կանանց հասանելիությանն առնչվող տվյալների հավաքման վերաբերյալ ուղեցույց

Կանանց հասանելիությունը արդարադատությանը. գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի չափորոշիչների կիրարկում

Անն Լորե Հյումբերտ
Մասնակցությամբ՝
Թամարա Բուհայեց
Լիզա Գրիգորյան
Անդրեյ Իովու
Եկատերինե Սխիլաձե
Վաֆա Ռուստամ

Եվրոպայի խորհուրդ

Արևելյան գործընկերության տարածաշրջանում գենդերային տվյալների շտկում. Արդարադատության համակարգին կանանց հասանելիությանն առնչվող տվյալների հավաքման վերաբերյալ ուղեցույց

Մշակվել է «Կանանց հասանելիությունը արդարադատությանը. գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի չափորոշիչների կիրարկում» նախագծի շրջանակներում՝ որպես «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի մաս:

Սույն ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են բացառապես հեղինակ(ներ)ը: Այստեղ արտահայտված տեսակետները չեն կարող համարվել Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական կարծիք:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է, բացառությամբ կոմերցիոն նպատակների, քանի դեռ պահպանում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ: Աղբյուրի տեքստը միշտ պետք է նշվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրատարակման տարի». Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանության հետ կապված բոլոր հարցումները պետք է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Ստրասբուրգ կամ publishing@coe.int).

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ հարցումները պետք է ուղղվեն Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով գլխավոր տնօրինությանը

Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով գլխավոր տնօրինություն

Եվրոպայի պողոտա

67075 Ստրասբուրգ ՖՐԱՆՍԻԱ

Էլ-հասցե՝ dpc_pgg@coe.int

Շապիկի դիզայնը և շարվածքը՝ Փաստաթղթերի և հրապարակումների արտադրության վարչություն, Եվրոպայի խորհուրդ

Լուսանկար՝ Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, փետրվար 2026: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզավորված է Եվրոպական միությանը՝ համաձայն պայմանների:

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 7

2.1. Տվյալների որակի և համեմատելիության սկզբունք 7

2.2. Տվյալների տարբեր աղբյուրների կիրառման և եռանկյունավորման սկզբունք 8

2.3. Յուրաժամանակության և պարբերականության սկզբունք 8

2.4. Ներառականության և խտրականության բացառման սկզբունք 9

2.5. Անձնական կյանքի պաշտպանության, գաղտնիության և էթիկական նկատառումների սկզբունք 9

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԴԵՐԵՐ և ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ 10

3.1. Նպատակ և հիմնավորում 10

3.2. Համապատասխան հաստատություններ 11

3.3. Համակարգման կառուցակարգեր 12

3.4. Ընթացակարգեր և չափորոշիչներ 13

3.5. Կարողությունների հզորացում 15

3.6. Մշտադիտարկում և գնահատում 15

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈԼՈՐՏՆԵՐ և ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 17

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 20

A. Կառավարում և չափորոշիչներ 20

B. Համակարգեր, անվտանգություն և կարողություններ 21

C. Մասնակցություն և շարունակականություն 22

1. Ներածություն

Սույն ուղեցույցը գործնական ճանապարհային քարտեզ է առաջարկում Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի արդարադատության համակարգի հաստատությունների, ազգային վիճակագրական ծառայությունների և այլ իրավասու մարմինների համար՝ մշակելու, հավաքելու, կառավարելու և կիրառելու արդարադատության համակարգին կանանց հասանելիության վերաբերյալ գենդերազգայուն տվյալներ, որոնք վերաբերում են Արևելյան գործընկերության տարածաշրջանի բոլոր երկրներում 2024 և 2025 թթ.-ին ազգային խորհրդատուների կողմից «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի1 մաս կազմող «Կանանց հասանելիությունը արդարադատությանը. գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի չափորոշիչների կիրարկում» նախագծի շրջանակներում իրականացված գնահատմանը և վերջինիս ընթացքում որոշարկված տարածաշրջանային բացերին և մարտահրավերներին: Ուղեցույցը մշակվել է Արդարադատության հասանելիության չափման հիմքերի, այդ թվում՝ կանանց առջև ծառացած հատուկ մարտահրավերներին անդրադարձի հիման վրա (ՄԱԿ Կանայք/Եվրոպայի խորհուրդ, 2016)2:

Սույն ուղեցույցը կիրառելի է, ի թիվս այլոց, հետևյալ հաստատությունների համար՝

- Արդարադատության համակարգի հաստատություններ (դատարաններ, դատախազության մարմիններ, ոստիկանություն, իրավաբանական աջակցության ծառայություններ)
- Ազգային վիճակագրական ծառայություններ
- Արդարադատության նախարարություն և կից գերատեսչություններ
- Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտներ և ազգային հաստատություններ, հավասարության ապահովման գծով մարմիններ

1. Ազգային գնահատումները ներկայացված են ներքին աշխատանքային փաստաթղթերի տեսքով:
2. Արդարադատության հասանելիության չափման հիմքերը անդրադարձ կանանց առջև ծառացած հատուկ մարտահրավերներին (ՄԱԿ Կանայք/Եվրոպայի խորհուրդ, 2016)

- Իրավաբանական աջակցությամբ և մշտադիտարկմամբ զբաղվող քաղհասարակության կազմակերպություններ

Սույն ուղեցույցը մշակվել է հետևյալ չափորոշչային փաստաթղթերի հիման վրա՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ կոնվենցիա (CEDAW) (մասնավորապես՝ վերջինիս No. 33 համընդհանուր առաջարկը, որը սահմանում է արդարադատության համակարգին կանանց հասանելիության ապահովման վերաբերյալ համապարփակ ուղեցույցը), Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին (Ստամբուլյան կոնվենցիա) (որի Հոդված 11-ը սահմանում է դասակարգված վերաբերելի վիճակագրական տվյալների հավաքման պարտավորությունները), Կայուն զարգացման նպատակներ (հատկապես՝ ԿԶՆ 5՝ գենդերային հավասարության վերաբերյալ, և ԿԶՆ 16՝ խաղաղ, արդար և ներառական հասարակությունների կառուցումը խթանելու վերաբերյալ), ինչպես նաև արդարադատության համակարգերի որակը, արդյունավետությունը և հասանելիությունը գնահատելու նպատակով Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից մշակված ցուցանիշները:

2. Գենդերազգայուն տվյալների հավաքման սկզբունքները

Ույն ուղեցույցը ավարտուն չէր լինի առանց գենդերազգայուն տվյալների հավաքումն ուղղորդող հիմնարար սկզբունքների: Նշված սկզբունքների առաջնահերթ սահմանումը հիմք է հանդիսանում հետագա բոլոր առաջարկների համար՝ ապահովելով տվյալների հավաքման գործընթացի ոչ միայն տեխնիկական ճշգրտությունը, այլև ներառականությունը, մարդու իրավունքներին համապատասխանությունը և արտացոլումը այն իրողությունների և խոչընդոտների, որոնց բախվում են կանայք: Սահմանելով նշված ուղղորդիչ արժեքները՝ հաստատվում է հետևողական իրավական հենք և շրջանակ, որը կիրառելի է տարբեր հաստատությունների և իրավիճակների համար և ապահովում է վստահելի, համեմատելի և իմաստալից արդյունքներ՝ ուղղված կանանց համար արդարադատության հասանելիության բարելավմանը:

2.1. Տվյալների որակի և համեմատելիության սկզբունք

Տարբեր հաստատությունների համար արդարադատության համակարգի տվյալները երկարաժամկետ հեռանկարում իմաստալից և համեմատելի դարձնելու նպատակով հարկ է որդեգրել և հետևողականորեն առաջնորդվել որոշակի չափորոշչային սահմանումներով, դասակարգումներով և մետատվյալներով: Օրինակ՝ «ընտանեկան բռնություն» կամ «իրավաբանական աջակցության շահառու» եզրույթները պետք է ունենան համընդհանուր, իրավական և գործառնական առումով ընդունելի նշանակություն: Մասնավորապես, ինստիտուցիոնալ գործելակարգերում պետք է ներդրվեն տվյալների որակի ապահովման ընթացակարգեր, այդ թվում՝ ընթացիկ ստուգումներ, տվյալների հավաստման, սխալների զեկուցման և շտկման մեխանիզմներ: Թեև ստուգման և հավաստման գործընթացները կենտրոնական նշանակություն ունեն, դրանք պետք է իրականացվեն էթիկայի սկզբունքներին համապատասխան (օրինակ՝ գաղտնիության ապահովում, մնասի բացառում, տեղեկացված համաձայնության հետ գործողությունների համապատասխանեցում), հատկապես զգայուն տվյալների դեպքում: Նշված միջոցները ոչ միայն առավել արժանահավատ են դարձնում տվյալները, այլև ամրապնդում են վստահությունը տվյալների օգտագործողների շրջանում՝ քաղաքականություն մշակողներից մինչև լայն հանրություն:

2.2. Տվյալների տարբեր աղբյուրների կիրառման և եռանկյունավորման սկզբունք

Արդարադատության համակարգին կանանց հասանելիությունը լավագույնս պատկերացնելու համար բավարար չէ հիմնվել տեղեկատվության ընդամենը մեկ աղբյուրի վրա: Եռանկյունավորումը կամ տրիանգուլյացիան (այլ կերպ ասած՝ տվյալների տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրումը) ճշգրտում է տվյալները՝ լրացնելով տեղեկատվական բացերը: Այսպիսով, դատարաններից, ոստիկանությունից, դատախազության մարմիններից և իրավաբանական աջակցության ծառայություններից ստացված վարչական տվյալները համադրվում են հարցումների, որակական հարցազրույցների, այդ թվում՝ ֆոկուս խմբային քննարկման արդյունքների հետ, որոնք արտացոլում են իրական փորձն ու իրավիճակային նրբերանգները: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և գիտաուսումնական ոլորտի գործընկերները հույժ կարևոր դեր ունեն նշված գործընթացում՝ հանդիսանալով թե տվյալների աղբյուր, թե պաշտոնական վիճակագրությունը հավաստող անկախ փորձագետներ, ում շնորհիվ վիճակագրական թվերն արտացոլում են իրականությունը՝ տարբեր տեսանկյուններից: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտները և ազգային հաստատությունները ևս հանդես են գալիս որպես տվյալների աղբյուր (հայցերի քննության, դատական գործերի մշտադիտարկման, թեմատիկ զեկույցների միջոցով), ինչպես նաև արդարադատության համակարգի տվյալները հավաստող անկախ փորձագետներ՝ փոխլրացնելով ՔՀԿ-ների և գիտաուսումնական ոլորտի կողմից տրամադրված տվյալները:

2.3. Յուրաժամանակության և պարբերականության սկզբունք

Տվյալները պետք է կանոնավոր պարբերականությամբ հավաքվեն և արդիացվեն՝ նպաստելու քաղաքականությանն ու ծրագրին առնչվող որոշումների կայացման գործընթացին: Տվյալների հավաքման ֆիքսված կենսափուլերի ինստիտուցիոնալացումը (ինչպիսիք են՝ տարեկան կամ երկամյա հաշվետվությունները հիմնական ցուցանիշների վերաբերյալ, այդ թվում՝ գործերի կարճման ցուցանիշները, իրավական իրազեկության և արդարադատության մարմինների նկատմամբ վստահության մակարդակը) ապահովում է շարունակականություն և որոշակի ժամանակային կտրվածքով միտումների վերլուծություն: Ոստիկանության մարմինների, դատարանների և իրավաբանական աջակցության ծառայությունների վարչական ռեգիստրները պետք է արդիացվեն համաձայնեցված նվազագույն հաճախականությամբ՝ ապահովելու ընթացիկ տեղեկությունների յուրաժամանակ հասանելիությունը և նվազեցնելու հնացած կամ թերի տվյալների հիման վրա ռազմավարական որոշումների կայացման ռիսկը:

2.4. Ներառականության և խտրականության բացառման սկզբունք

Գենդերազգայուն տվյալների հավաքումը պետք է իրականացվի ներառականության և անխտրականության պահպանմամբ՝ ապահովելու բնակչության բոլոր համապատասխան խմբերի ներկայացվածությունը ապացուցողական բազայում, ինչը ենթադրում է տվյալների համակարգված դասակարգում՝ ըստ սեռի, տարիքի, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, աշխարհագրականվայրի,հաշմանդամությանկարգիկամարդարադատության հասանելիությունը բնորոշող բազմատարր այլ գործոնների, օրինակ՝ գնչու կանայք, քաղաքացիություն չունեցող անձինք, ծեր կանայք կամ միգրանտներ: Հատուկ ուշադրությամբ պետք է արձանագրվեն լուսանցքավորված և խոցելի խմբերի, այդ թվում՝ գյուղական կամ հեռավոր համայնքներում բնակվող, էթնիկական կամ լեզվական փոքրամասնության պատկանող, ԼԳԲՏԻ և հաշմանդամություն ունեցող անձանց փորձառությունները: Առանց նման մանրամասնման էական խոչընդոտներն ու անհավասարության դեպքերը մնում են չբացահայտված՝ սահմանափակելով կանանց և աղջիկների համընդհանուր կարիքներին ուղղված քաղաքականությունների և միջամտությունների մշակման հնարավորությունը: Տվյալներ հավաքողները պետք է համակարգորեն դիտարկեն անհավասարության հատվող դեպքերը՝ ընդհանուր խոչընդոտները և դրանց նպաստող հնարավոր գործոնները առավել հստակ արտացոլելու նպատակով:

2.5. Անձնական կյանքի պաշտպանության, գաղտնիության և էթիկական նկատառումների սկզբունք

Գենդերազգայուն տվյալների հավաքման բոլոր գործընթացները պետք է ապահովեն անձնական կյանքի պաշտպանության, գաղտնիության և էթիկական խիստ երաշխիքների պահպանումը, մասնավորապես՝ գենդերային հիմքով բռնությանն առնչվող զգայուն դեպքերի հետ աշխատելիս: Նշված գործընթացը ներառում է անձնական տվյալների ապանձնավորում կամ ընդհանրացում՝ ինքնության նույնականացումը կանխելու և վնասի կամ խարանման ռիսկերը նվազեցնելու նպատակով: Տվյալներ հավաքողները և պահառուները պարտավոր են պահպանել տվյալների պաշտպանության ներպետական օրենքները, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային չափորոշիչները՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով նաև տեղեկացված համաձայնություն և զոհակենտրոն մոտեցում, որոնք սահմանում են տվյալներում ներկայացված անձանց արժանապատվությունը, անվտանգությունն ու իրավունքները որպես առաջնահերթություն:

3. Կազմակերպչական դերեր և համակարգման կառուցակարգեր

3.1. Նպատակ և հիմնավորում

Կազմակերպչական հստակ դերերը և համակարգման արդյունավետ կառուցակարգերը ընկած են արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների համակարգված, հետևողական և շարունակական հավաքման հիմքում: Առանց հաստատությունների փոխգործակցության հստակ շրջանակի տվյալները կարող են կցկտուր կամ թերի լինել, տարբեր գերատեսչությունների միջև և/կամ երկարաժամկետ հեռանկարում դժվար համադրելի: Մի շարք դեպքերում համընկնող հանձնագրերի կամ տվյալների չհամաձայնեցված համակարգերի առկայությունը կարող է հանգեցնել կրկնակի աշխատանքի, տվյալների ընդգրկման շրջանակի բացերի, սահմանման կամ ծածկագրման անհամապատասխանությունների, որոնք իրենց հերթին կարող են նվազեցնել քաղաքականության արդիության կամ ապացուցողական բազայի վստահելիության մակարդակը:

Համակարգման ինտեգրված կառույցը ապահովում է, որ արդարադատության շղթայի յուրաքանչյուր օղակ (այդ թվում՝ դատարաններ, ոստիկանություն, դատախազության մարմիններ, իրավաբանական աջակցության ծառայություններ, վիճակագրական գործակալություններ, գենդերային հավասարության հարցերով մարմիններ) հասկանա իր դերն ու համակարգորեն նպաստի ընդհանուր ցուցանիշներին: Տվյալների չափորոշիչների համաձայնեցումը, պարտականությունների հստակեցումը, տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցների և համակարգման կառուցակարգերի սահմանումը բարձրացնում են աշխատանքի արդյունավետությունը, նվազեցնում անհարկի կրկնակի աշխատանքը, նպաստում հաստատությունների փոխվստահությանը:

Նշված կառուցակարգերի օգնությամբ հնարավոր է ապահովել վստահելի, յուրաժամանակ, համադրելի, ըստ սեռի դասակարգված տվյալներ՝ հզորացնելով քաղաքականություն մշակողների և շահագրգիռ այլ կողմերի կարողությունները՝ մշակելու ապացուցահեն միջամտություններ՝ ի անդրադարձ արդարադատության հասանելիության կոնկրետ խոչընդոտների, որոնց բախվում են կանայք:

3.2. Համապատասխան հաստատություններ

Համակարգման արդյունավետ կառուցակարգի ստեղծման առաջին քայլը արդարադատության ոլորտին առնչվող տվյալների հավաքման, պահպանման կամ կիրառման մեջ ներգրավված բոլոր կողմերի համապարփակ գրանցումն է: Վերջիններիս քարտեզագրումը թույլ է տալիս հասկանալ տվյալներ տրամադրողների, պահառուների և օգտագործողների ողջ համակարգը՝ որոշարկելով համաձայնեցման, ինտեգրման և համագործակցության հնարավորություններ:

Նշված քարտեզագրումը պետք է ընդգրկի արդարադատության ողջ շղթան և շահագրգիռ բոլոր կողմերին, այդ թվում՝

- Դատական մարմիններ, ինչպիսիք են Գերագույն դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի դատարանները և դատական խորհուրդները:
- Իրավապահ մարմիններ, այդ թվում՝ ոստիկանության ուժեր, դատախազության մարմիններ և քննչական կոմիտեներ:
- Իրավաբանական աջակցություն տրամադրողներ (պետական ֆինանսավորմամբ և անկախ), ինչպիսիք են՝ հանրային պաշտպանի գրասենյակները, փաստաբանների միությունները և անվճար կամ ցածր արժողությամբ իրավաբանական աջակցություն տրամադրող հասարակական կազմակերպություններ:
- Ազգային վիճակագրական ծառայություններ՝ կենտրոնական և տարածաշրջանային մակարդակով, որոնք առանցքային դեր ունեն պաշտոնական տվյալների համախմբման և հանրայնացման հարցում:
- Մասնագիտացված գերատեսչություններ, որոնք իրավասու են զբաղվելու որոշակի խնդիրներով, ինչպիսիք են՝ գենդերային հավասարությունը, ընտանեկան բռնության կանխարգելումը և երեխաների պաշտպանությունը:
- Առողջապահության համակարգի մասնագետներ և սոցիալական ապահովության ծառայություններ, որոնց հաճախ առաջինն են դիմում բռնության ենթարկված կանայք, և որոնք արժեքավոր վարչական տվյալներ են ապահովում չարձանագրված դեպքերի մեծամասնության վրա լույս սփռելու տեսանկյունից:
- Արդարադատության մշտադիտարկմամբ, իրազեկմամբ և հետազոտական գործունեությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ և գիտաուսումնական հաստատություններ

Նշված գործընթացի շրջանակներում կարելի է մշակել մանրամասն ինստիտուցիոնալ քարտեզ՝ յուրաքանչյուր մարմնի հանձնագրի նկարագրով, հավաքվող տվյալների տեսակներով, հաշվետվողականությամբ, այլ գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման պաշտոնական և ոչ պաշտոնական գործելակարգերով: Նման քարտեզը ոչ միայն հստակեցնում է բոլոր կողմերի դերերը և պարտականությունները, այլև բացահայտում

տվյալների հոսքերի կրկնօրինակման դեպքերը, բացերը և հնարավոր փոխազդեցությունները:

3.3. Համակարգման կառուցակարգեր

Համակարգման կառուցակարգերի ընդհանուր նպատակը արդարադատության համակարգում տվյալների հոսքի արդյունավետության ապահովումն է, կրկնակի աշխատանքի կանխումը, վարչական բազաների միջև տվյալների խաչաձև ստուգման հնարավորության և դրանով իսկ տվյալների ճշգրության և ամբողջականության ապահովումը: Արդյունավետորեն մշակված համակարգման կառուցակարգերի միջոցով ստեղծվում է արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների համապարփակ և ինտեգրված համակարգ:

Համակարգման կառույցը պետք է ներառի ինչպես միջգերատեսչական աշխատանքային խմբեր, այնպես էլ մշտական համակարգման մարմիններ: Միջգերատեսչական աշխատանքային խմբերում պետք է ընդգրկվեն դատական մարմինների, ոստիկանության, ազգային վիճակագրական, դատախազության, իրավաբանական աջակցության ծառայությունների ներկայացուցիչներ: Նշված աշխատանքային խմբերը պետք է ծառայեն որպես երկխոսության, խնդիրների միացյալ լուծման, մեթոդաբանությունների և առաջնահերթությունների համապատասխանեցման հարթակներ: Ի լրումն այս խմբերի՝ հիմնական նախարարություններին կամ վիճակագրական ծառայություններին կից մշտական համակարգման մարմինները ապահովում են արդարադատության ոլորտին առնչվող գենդերային տվյալների շարունակական հսկողություն: Նշված մարմինները ապահովում են համաձայնությունների կատարումը, ինստիտուցիոնալ հիշողության պահպանումը, ամբողջական և արդի տվյալների համակարգի գործունեության համար անհրաժեշտ առօրյա համակարգման առաջադրանքների կառավարումը: Ավելին՝ այլ շահառուների (օրինակ՝ կանանց կազմակերպություններ, վերապրածների համագործակցային ցանցեր կամ քաղաքացիական լայն հասարակության ներկայացուցիչներ) ներգրավումը կարող է նպաստել հաշվետվողականությանը, վերապրած իրականությանը տվյալների համապատասխանեցմանը, համակարգի ներսում վստահության ամրապնդմանը:

Համակարգման կառուցակարգերի գործառույթները ներառում են տվյալների հավաքման տարեկան կամ երկամյա միջոցառումներ՝ ապահովելով հանդերձ, որ դրանց ժամկետները, ներգրավվող ռեսուրսները և բոլոր մասնակից հաստատությունների համար սահմանված պարտականությունները հստակ լինեն վերջիններիս համար: Նշված գործառույթները ներառում են նաև մասնակիցների կողմից ընդհանուր առաջնահերթությունների և հիմնական ցուցանիշների շուրջ համաձայնության ձեռքբերում, ինչը թույլ է տալիս կենտրոնանալ նույն առաջադրանքների վրա և ապահովում է տարբեր գերատեսչությունների տվյալների համախմբերի համադրելիությունը: Բացի

այդ, նշված կառուցակարգերը նպաստում են տվյալների փոխանակման վերաբերյալ համաձայնագրերի և փոխգործունակության չափորոշիչների մշակմանը, ինչն ապահովում է համակարգերի միջև տեղեկության ապահով, արդյունավետ և ավտոմատացված փոխանակմանը՝ բարձրացնելով արդարադատությանն առնչվող գենդերազգայուն տվյալների ընդհանուր որակն ու հասանելիությունը: Համակարգման մարմինները պետք է եռամսյակային հանդիպումներ կազմակերպեն՝ գնահատելու առաջընթացը, անդրադառնալու գործառնական խնդիրներին և պլանավորելու հետագա անելիքները: Բացի այդ, հարկ է կազմակերպել ռազմավարական գնահատման տարեկան հանդիպումներ՝ գնահատելու համակարգի ընդհանուր կատարողականը, որոշարկելու քաղված դասերը և վերանայելու առաջնահերթությունները հաջորդ տարվա համար:

Համակարգման արդյունավետ կառուցակարգերը պետք է հիմնվեն ռիսկերի կառավարման ամուր համակարգի վրա՝ ապահովելու արդարադատությանն առնչվող տվյալների արժանահավատությունը, անկախությունը և էթիկական սկզբունքներին համահունչ օգտագործումը: Այս ոլորտի ռիսկերը չեն սահմանափակվում միայն տեխնիկական թերություններով, այլև առնչվում են ինստիտուցիոնալ և քաղաքական տիրույթներին՝ վտանգելով տվյալների ամբողջականությունը և հանրային վստահությունը: Հիմնական ռիսկերից են, օրինակ, տվյալների քաղաքական շահարկումը, երբ վիճակագրությունը աղավաղվում կամ ընտրովի է հրապարակվում՝ գերադասելի արդյունքը ներկայացնելու համար, տվյալների ընտրովի կամ անհետևողական արձանագրումը, որի պարագայում դուրս են մնում բացասական արդյունքները կամ գենդերային անհավասարության դեպքերը, մյուս կողմից՝ տվյալների չարաշահումը՝ քաղաքականության ոլորտում նախապես ընդունված որոշումները հիմնավորելու, այլ ոչ՝ ապացույցների հիման վրա բարեփոխումներ մշակելու նպատակով: Նման գործողությունները կարող են հանգեցնել հանրային ընկալման աղավաղմանը, հաստատությունների հանդեպ վստահության քայքայմանը և հաշվետվողականության նվազմանը:.

3.4. Ընթացակարգեր և չափորոշիչներ

Հստակ և հետևողական ընթացակարգերը և չափորոշիչները կարևորագույն դեր ունեն արդարադատության ոլորտին առնչվող գենդերազգայուն տվյալների ամբողջականությունը, համադրելիությունը և տարբեր հաստատություններում կիրառելիությունը ապահովելու հարցում: Այս նպատակով հարկ է առաջնահերթ որդեգրել միանման ձևանմուշների և ծածկագրման համակարգերի կիրառումը, այդ թվում՝ «ընտանեկան բռնության դեպք», «իրավաբանական աջակցության շահառու» կամ «պաշտպանիչ կարգադրության արձակում» կարգի հիմնական եզրերի համընդհանուր սահմանումները: Բացի այդ, բոլոր դերակատարները պետք է համաձայնության գան դասակարգման նվազագույն փոփոխականների շուրջ, այդ թվում՝ ըստ սեռի, տարիքի, աշխարհագրական վայրի, հաշմանդամության կարգի կամ օրենքով թույլատրելի դեպքերում՝ էթնիկ պատկանելիության.

այդ ամենի նպատակն է ապահովել, որ տվյալները արտացոլեն վերապրած փորձի ու հանդիպած խոչընդոտների ողջ բազմազանությունը: Կանանց նկատմամբ բռնության դեպքերում տվյալները պետք է նաև արձանագրեն բռնության և զոհի ու բռնարարի միջև հարաբերության տեսակը:

Կառուցակարգը պետք է սահմանի նաև արդարադատության համակարգերում գենդերային հավասարության մշտադիտարկման որոշակի չափորոշչային ցուցանիշներ՝ համահունչ այնպիսի միջազգային պարտավորություններին, ինչպիսիք են՝ Կայուն զարգացման նպատակները, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ կոնվենցիան և Ստամբուլյան կոնվենցիան:

Տվյալների սահուն փոխանակման և ինտեգրման նպատակով դրանք պետք է պահպանել և փոխանցել մեքենակարդացվող ձևաչափերով (օրինակ՝ XML, CSV)՝ նպաստելու համակարգերի փոխգործունակությանը: Զգայուն, հատկապես՝ գենդերային բռնությանն առնչվող տեղեկության դեպքերում տվյալների փոխանցումը և պահպանումը պետք է իրականացնել վստահելի խողովակներով:

Արդարադատությանն առնչվող տվյալների թվայնացումը հարկ է կատարել՝ խստորեն պահպանելով կիբերանվտանգության և ներառականության կանոնները: Հաշվի առնելով գենդերային բռնության դեպքերին առնչվող անձնական տվյալների զգայունությունը՝ հույժ կարևոր են SS անվտանգության վստահելի երաշխիքները: Որպես նվազագույն պարտադիր պայման՝ համակարգերը պետք է օգտագործեն տվյալների ծածկագրում, օգտատերերի բազմագործոն նույնականացում, հասանելիության սահմանափակում՝ ըստ աշխատանքային անհրաժեշտության, տվյալների օգտագործման գրանցամատյանի վարում: Անհրաժեշտ է ներդնել ներթափանցման փորձարկման, անձնակազմի համար կիբերանվտանգության դասընթացների, տվյալների ապահով պահուստավորման գործելակարգեր: Միաժամանակ թվայնացումը չպետք է խորացնի տարածքային կամ սոցիալական պառակտումը գյուղական կամ հեռավոր վայրերում արդարադատության հաստատությունները հաճախ ունենում են կապի և տեխնիկական կարողությունների խնդիր: Թվայնացումից դուրս չմնալու համար հարկ է օգտվել հիբրիդային համակարգերից (թվային գործիքների և թղթե կրիչներով կամ տվյալների անցանց հավաքման համադրում), քանի դեռ կապի խնդիրները չեն լուծվել և օգտատերերի համար դասընթաց չի անցկացվել:

Վերջապես, հարկ է սահմանել հաստատման գործընթաց, որի շրջանակներում միջգերատեսչական համակարգման խմբի կողմից պաշտոնապես կհաստատվեն բոլոր ձևանմուշները, ցուցանիշները և տեխնիկական չափորոշիչները, որոնք պարբերաբար (օրինակ՝ առնվազն երեք տարին մեկ) կվերանայվեն և կթարմացվեն՝ ապահովելու շարունակական արդիություն, համապատասխանություն տվյալներին առնչվող նոր կարիքներին և իրավական հենքի փոփոխություններին:

3.5. Կարողությունների հզորացում

Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը կարևոր դեր ունի արդարադատության ոլորտին առնչվող գենդերազգայուն տվյալների ճշգրիտ և շարունակական հավաքման, գրանցման և վերլուծության համար: Հիմնական անձնակազմի, այդ թվում՝ դատական գործավարների, վիճակագրագետների, ոստիկանության համակարգի տվյալների պատասխանատուների, իրավաբանական աջակցություն տրամադրողների համար պետք է մշակվեն վերապատրաստման տարեկան ծրագրեր: Նման դասընթացները պետք է անդրադառնան այնպիսի հիմնական թեմաների, ինչպիսիք են՝ գենդերազգայուն տվյալների գրանցումը, դասակարգման պահանջները, գաղտնիության և անձնական կյանքի պաշտպանության գործելակարգերը (օրինակ՝ Վիճակագրական բացահայտման հսկողության չափորոշիչներ), և թվային տվյալների համակարգերի արդյունավետ օգտագործումը: Դասընթացները պետք է կազմակերպվեն անցանց՝ փոխազդու ուսումնառության նպատակով, բայցև պարունակեն առցանց մոդուլներ՝ ապահովելու հասանելիություն և շարունակականություն:

Բացի այդ, մասնագիտացված վերապատրաստման մոդուլները պետք է անդրադառնան այնպիսի բարդ ոլորտների, ինչպիսիք են գենդերային բռնությանն առնչվող տվյալների մշակումը: Նշված մոդուլները պետք է ներառեն գործնական մարտահրավերներին և լուծումներին անդրադարձող դեպքերի ուսումնասիրություններ, ինչպես նաև այդ դեպքերին առնչվող նյութերի ծածկագրման և իսկության հաստատման գործնական վարժանքներ՝ բարձրացնելու համապատասխան մասնագետների աշխատանքի տեխնիկական ճշգրտությունը:

Բարձր չափորոշիչների պահպանման և մասնագիտական զարգացման խրախուսման նպատակով վերապատրաստման յուրաքանչյուր ծրագիր պետք է ներառի գնահատման և հավաստագրման բաղադրիչներ: Վերապատրաստմանը հետևող գնահատման միջոցով հնարավոր է ստուգել մասնակիցների կողմից գիտելիքի յուրացումը և իրենց աշխատանքում նոր հմտությունների կիրառման կարողությունը: Կարողությունների պահանջվող չափորոշիչներին համապատասխանելու դեպքում մասնակիցները ստանում են պաշտոնական հավաստագրում՝ ի նպաստ իրենց մասնագիտական ճանաչման և ի նշան գենդերազգայուն տվյալների մշակման լավագույն գործելակարգերի հանդեպ ինստիտուցիոնալ հավատարմության վերահաստատման:

3.6. Մշտադիտարկում և գնահատում

Շարունակական մշտադիտարկումն ու կանոնավոր գնահատումը կարևորագույն դեր ունեն արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների համակարգերի որակի, ամբողջականության և արդիության պահպանման հարցում: Համակարգման մարմինը պետք է տարեկան

կտրվածքով վերանայի ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ գնահատելով դերերի և պարտականությունների, ինչպես նաև գործելակարգերի գործնական արդյունավետությունը:

Առաջընթացի գնահատման և բարելավման կարիք ունեցող ոլորտների որոշարկման համար պետք է կիրառվեն կատարողականի հստակ ցուցանիշներ, որոնցից են, օրինակ, համաձայնեցված ձևանմուշներ և ծածկագրման համակարգեր հետևողականորեն կիրառող հաստատությունների տոկոսը, ըստ պահանջվող փոփոխականների, օրինակ՝ սեռի, տարիքի, գտնվելու վայրի, լիովին դասակարգված տվյալների համախմբերի տոկոսը, տրամադրվող տվյալների յուրաժամանակությունը և ամբողջականությունը:

Արդյունավետ համակարգը պետք է նաև ներառի տվյալների օգտագործողների (այդ թվում՝ քաղաքականություն մշակող մարմիններ, հետազոտողներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ) հետ հետադարձ կապի հնարավորություն՝ ապահովելու փոփոխվող կարիքներին տվյալների հավաքման գործելակարգերի արձագանքման կարողությունը: Նման հաղորդակցումն օգնում է կատարելագործել ցուցանիշները, արդիացնել սահմանումները, զարգացնել մեթոդաբանությունները՝ նպաստելով շարունակական բարելավման շրջափուլին և արդարադատության ոլորտում տվյալների վստահելիությանը, արդիությանը և նպատակահարմարությանը:

Տվյալների առաջնահերթ ոլորտներ և ցուցանիշներ

Տվյալների առաջնահերթ ոլորտների և ցուցանիշների որոշարկումը և համաձայնեցումը մեծապես օգնում են կենտրոնացնել տվյալների հավաքման ջանքերը արդարադատության համակարգին կանանց հասանելիության հիմնական խնդիրների վրա: Նշված առաջնահերթ ոլորտների ներքո սահմանված կառուցակարգը թույլ է տալիս գնահատել արդարադատության հաստատությունների գործունեությունը և նպաստավոր միջավայրը, ինչպես նաև արդարադատությանը դիմած կանանց փորձառությունը և արդյունքները (Աղյուսակ 1): 2025 թ. –ին ազգային խորհրդատուների մասնակցությամբ իրականացվել է տվյալների առաջնահերթ ոլորտների որոշարկման գործընթացին առնչվող առանձին վերլուծություն:

Աղյուսակ 1

Նպաստավոր միջավայր	Առաջարկի կողմ	Պահանջարկի կողմ
Նպաստավոր միջավայրը վերաբերում է արդարադատության համակարգին կանանց հասանելիության հիմքում ընկած իրավական և քաղաքականության հենքին: Նպաստավոր միջավայրը ենթադրում է, ի թիվս այլնի, ներպետական օրենսդրության համապատասխանեցում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ կոնվենցիային և Ստամբուլյան կոնվենցիային՝ ապահովելով վերջիններիս ներքո ստանձնած պարտավորությունների ամբողջական արտացոլումը ներպետական օրենսդրության մեջ: Բացի այդ, նպաստավոր միջավայրը ներառում է Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված գենդերային հավասարության վերաբերյալ դրույթներ, որոնք պաշտոնական իրավական հենք են ապահովում խտրականության	Առաջարկի կողմը ուսումնասիրում է դատական համակարգի հաստատությունների կարողությունները արձագանքելու կանանց կարիքներին, որի հիմնական բաղադրիչներից է դատավորների, դատախազների, փաստաբանների և ոստիկանների կազմը՝ ըստ սեռի, ինչը կարող է ազդեցություն ունենալ արդարադատության գործընթացի հասանելիության և վերջինիս հանդեպ վստահության վրա: Գենդերային բռնության դեմ պայքարի մասնագիտացված մարմինների և դատարանների թիվը և աշխարհագրական ծածկույթը արտացոլում է համակարգի պատրաստությունը՝ արձագանքելու գենդերի հիմքով հանցագործություններին: Աշխարհագրական հասանելիությունը, որը հաշվարկվում է մոտակա դատարանից միջին հեռավորությամբ կամ	Պահանջարկի կողմը կենտրոնանում է արդարադատությանը դիմելիս կանանց փորձառությունների, ընկալումների և վարքագծի վրա: Իրավունքների մասին իրազեկությունը, որը, որպես կանոն, գնահատվում է հարցումների միջոցով, հանդիսանում է դրանց իրացման նախապայման: Հասկանալով այն խոչընդոտները (գումար, խարանավորում, հեռավորություն, և այլն), որոնց բախվում են կանայք, ավելի դյուրին է որոշարկել բարեփոխումների կարիք ունեցող ոլորտները: Գենդերի հիմքով բռնության դեպքերում քրեական գործերով վարույթների կարճման ցուցանիշները, ինչպես նաև դատական հայցերի հետկանչի պատճառները, բացահայտում են դատապաշտպանության, հետաքննության և դատական հետապնդման ոլորտների բացերը: Վերջապես, դատարանների, ոստիկանության

բացառման և հավասար վերաբերմունքի սկզբունքների համար: Կանանց նկատմամբ բռնության բոլոր տեսակների քրեականացումը կենսական նշանակության նշաձող է, որը վիճարկման և իրավական պաշտպանության միջոց է ապահովում բռնությունը վերապրածների համար: Բացի այդ, ՀԿ-ների ռազմավարական դատավարությունը ևս կարևոր մեխանիզմ է կանանց իրավունքները դատական ճանապարհով խթանելու համար:	երթևեկության ժամանակով, կենսական նշանակություն ունի արդարացի հասանելիության տեսանկյունից: Վերջապես, քննված գործերի ցուցանիշները և գործերի քննության միջին ժամկետները՝ դասակարգված ըստ գործի տեսակի և հայցվորի սեռի, թույլ են տալիս կարծիք կազմել արդարադատության իրացման արդյունավետության և արդարացիության մասին:	իրավաբանական աջակցության ծառայությունների հանդեպ վստահության մակարդակը, որը որոշվում է հանրային ընկալման վերաբերյալ հարցումների միջոցով, արդարադատության համակարգի օրինականության և կանանց շրջանում դրա արդարացիության ընկալման կարևոր ցուցիչ է:

Առաջնահերթությունների որոշարկման նպատակով սույն հաշվետվությունը արդյունավետորեն կիրառելու համար առաջին քայլը կարող է լինել բոլոր հենքային ցուցանիշների քարտեզագրումը՝ թե ներպետական, թե միջազգային պարտավորությունների համատեքստում: Այլ կերպ ասած՝ հարկ է որոշարկել, թե կոնկրետ որ ցուցանիշներն են ուղղակիորեն նպաստում ներպետական արդարադատության համակարգի բարեփոխումներին, ինչպես նաև ԿՀՆ 5 և 16-ի, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ կոնվենցիայի և Ստամբուլյան կոնվենցիայի ներքո սահմանված հաշվետվողականության պահանջներին: Առավել առաջնահերթ պետք է համարվեն մի քանի նպատակի ծառայող ցուցանիշները՝ որպես առավել արդյունավետ և նպաստավոր միանգամից մի քանի պարտավորությունների իրագործման համար:

Հաջորդ քայլը յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ առկա տվյալների գնահատումն է: Հիմնվելով ինստիտուցիոնալ քարտեզագրման և տվյալների աղբյուրների նկարագրերի վրա, որոնք առկա են հաշվետվության մեջ, ցուցանիշները կարելի է դասակարգել երեք խմբի՝ ցուցանիշներ, որոնց վերաբերյալ տվյալները ամբողջական են և ստանդարտացված, ցուցանիշներ, որոնց վերաբերյալ տվյալները մասնակի են և բարելավման կարիք ունեն, և ցուցանիշներ, որոնց վերաբերյալ տվյալներ դեռ առկա չեն: Նշված դասակարգումը թույլ է տալիս հաջողությամբ մեկնարկել առաջին խմբի ցուցանիշներով աշխատանքը՝ կարճաժամկետ հեռանկարում պլանավորելով նաև երկրորդի բարելավման ջանքերը:

Քաղաքականության իրագործման հրատապությունը ևս պետք է ուղղորդի գնահատման հերթականությունը: Ակտիվ քննարկման առարկա հանդիսացող քաղաքականությանը, օրենսդրական բարեփոխումներին կամ հանրային լուրջ մտահոգության ոլորտներին առնչվող ցուցանիշները պետք է դիտարկվեն որպես առաջնահերթություն: Օրինակ՝ գենդերի հիմքով բռնության վերաբերյալ օրենսդրությունը բարեփոխելիս հարկ է առաջնորդվել քրեականացման, քրեական գործերի վարույթների կարճման

և պաշտպանիչ կարգադրությունների վերաբերյալ ցուցանիշներով: Տվյալ երկրի իրավիճակային համատեքստը և լավագույն փորձի օրինակները, որոնք ներկայացված են հաշվետվության մեջ, օգտակար են ցուցանիշների ընտրությունը քաղաքականության ներքո ընձեռվող հնարավորություններին համապատասխանեցման տեսանկյունից:

Ինստիտուցիոնալ պատրաստությունը մեկ այլ կարևոր գործոն է. ինստիտուցիոնալ կառուցվածքին նվիրված հաշվետվության բաժինը թույլ է տալիս որոշարկել, թե որ գերատեսչություններն են հանձնառու, իրավունակ կամ զինված համապատասխան համակարգերով ու կարողություններով՝ տվյալներ հավաքելու յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ: Հարկ է նախապատվությունը տալ լավ պատրաստված հաստատություններին, որոնք կարող են աշխատել ցուցանիշների հետ՝ նվազագույն միջգերատեսչական համակարգմամբ, ապա նոր՝ լայնածավալ համագործակցություն կամ ենթակառուցվածքներ պահանջողներին:

Ցուցանիշների գնահատման հարցում հարկ է հաշվի առնել նաև գործընթացի բարդությունը և ծախսատարությունը: Վարչական առկա համակարգերի միջոցով ցուցանիշների գնահատումը, օրինակ՝ դատավորների կազմը՝ ըստ սեռի, պետք է իրականացնել առաջնահերթ: Ավելի ռեսուրսատար ցուցանիշները, որոնք պահանջում են հարցումներ կամ միջգերատեսչական բարդ տվյալների ինտեգրում, կարող են գնահատվել ավելի ուշ: Հաշվետվության մեջ ներկայացված են տվյալների յուրաքանչյուր ոլորտի ենթակառուցվածքային կարիքները, որոնք կարող են հաշվի առնվել գնահատման առաջնահերթության վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Գնահատման փուլային իրականացումը ապահովում է գործընթացի կառավարելիությունը: Առաջին փուլում պետք է կենտրոնանալ հեշտ թվայնացվող վարչական տվյալների վրա, ապա՝ համակարգի մասնակի արդիացում պահանջող ցուցանիշների, և վերջապես՝ տվյալների հավաքման բոլորովին նոր համակարգ կամ հարցումներ պահանջողների: Հաշվետվության մեջ ներկայացված ճանապարհային քարտեզի օրինակները կարող են ուղղորդել յուրաքանչյուր փուլում ձեռքբերելի արդյունքներին:

Վերջապես, գնահատման փուլային իրականացումը հաշվետվողականության կենսափուլերի հետ համաձայնեցնելը կարող է մեծացնել դրա ռազմավարական նշանակությունը: Ներպետական և միջազգային հաշվետվողականության վերջնաժամկետները թույլ են տալիս պլանավորել ցուցանիշների իրացումն այնպես, որ վերջիններիս արդյունքները ուղղակիորեն նպաստեն ավելի լայնածավալ ձեռքբերումների: Այսպիսով, աշխատանքը դառնում է ոչ միայն ավելի տեսանելի, այլև նպաստում քաղաքական և ինստիտուցիոնալ հավատարմությանը: Մշտադիտարկմանը և շարունակական բարեփոխմանը նվիրված հաշվետվության բաժինը կարող է օգտագործվել՝ տարեկան գնահատման իրականացման, քաղաքականության համար պակաս կարևոր կամ խնդրահարույց ցուցանիշների հեռացման կամ գնահատման հետաձգման, կամ ժամանակի ընթացքում առավել իրագործելի դարձած ցուցանիշների խթանման համար:

Հիմնական առաջարկներ իրավասու մարմինների համար

Արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների հավաքման, վերլուծության և կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար իրավասու մարմինները պետք է դիտարկեն հետևյալ գործողությունները.

A. Կառավարում և չափորոշիչներ

1. Որդեգրել արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների ներպետական համակարգ, որը համահունչ լինի ՄԱԿ Կանայք/Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված ցուցանիշներին: Այս կերպ, հնարավոր կլինի հետևողականություն ապահովել տարբեր հաստատությունների միջև, համադրելիություն երկարաժամկետ հեռանկարում և համապատասխանություն միջազգային չափորոշիչներին:

2. Հանձնարարել ըստ սեռի կամ անհավասարության հատվող դեպքերի (օրինակ՝ տարիք, հաշմանդամություն, էթնիկական պատկանելություն, գտնվելու վայր, սոցիալ-տնտեսական կարգավիճակ) որևէ այլ խմբին առնչվող դասակարգված տվյալների հավաքումը և հաշվետվողականությունը արդարադատության ոլորտի բոլոր վիճակագրական մարմիններին: Սույն պահանջը պետք է ներառվի համապատասխան օրենսդրության, կանոնակարգի կամ նախարարի հանձնարարականի մեջ՝ արդարադատության ոլորտի բոլոր մարմինների միջև համապատասխանություն ապահովելու նպատակով:

3. Մշակել և իրագործել էթիկական և տվյալների պաշտպանության չափորոշիչներ արդարադատության ոլորտի տվյալների բոլոր համակարգերում: Սահմանված միջոցները պետք է ներառեն զգայուն տվյալների ապանձնավորում, զոհակենտրոն գաղտնիության գործելակարգեր, տվյալների մշակման համաձայնության և տվյալների պահպանման հստակ կանոներ՝ պաշտպանելու բոլոր ներգրավված անձանց արժանապատվությունը և անձնական տվյալների գաղտնիությունը:

4. Ապահովել արդարադատության ոլորտում գենդերային հիմնական ցուցանիշների վերաբերյալ տարեկան հանրային հաշվետվությունների և/կամ վահանակների հրապարակման թափանցիկությունը: Նշված հաշվետվությունները պետք է հասանելի լինեն քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և լայն հանրությանը՝ ներառելով թե քանակական, և թե որակական արդյունքներ:

B. Համակարգեր, անվտանգություն և կարողություններ

5. Մշակել ապահով և ինտեգրված թվային համակարգեր, որոնք կապում են դատարաններին, ոստիկանությանը, դատախազությանը և իրավաբանական աջակցության ծառայություններին: Փոխգործունակությունը պետք է համալրել կիբերանվտանգության երաշխիքներով (օրինակ՝ ծածկագրում, օգտատիրոջ նույնականացում, հասանելիության վերահսկում և ստուգման հետագիծ)՝ կանխելու տվյալների արտահոսքը կամ չարաշահումը, հատկապես գենդերի հիմքով բռնության դեպքերում:

6. Անցկացնել կանոնավոր և համաչափ ֆինանսավորմամբ վերապատրաստում տվյալների հավաքմամբ զբաղվող անձնակազմի համար: Վերապատրաստումը պետք է կենտրոնանա գենդերազգայուն տվյալների գրանցման, դասակարգման պահանջների, գաղտնիության գործելակարգերի և թվային համակարգերի օգտագործման վրա:

7. Ամրապնդել գիտելիքի պահպանման և ինստիտուցիոնալ շարունակականության գործելակարգերը: Նշված ընթացակարգերը և մեթոդաբանությունները պետք է հստակորեն փաստաթղթավորվեն, մենթորինգի և փորձառու ու նորեկ աշխատակիցների միջև փորձի փոխանակման ավանդույթը պետք է հաստատվի, տվյալների առաջնային գործառույթների համար պատասխանատուների համար պետք է նշանակվեն պահուստային կոնտակտային անձինք: Նշված միջոցները նպաստում են գիտելիքի շարունակականությանը նույնիսկ անձնակազմի աշխատանքից հեռանալու կամ այլ պաշտոնի նշանակվելու դեպքում:

8. Ապահովել տվյալների փոխանակման վերաբերյալ պաշտոնական փոխհամաձայնություն արդարադատության համակարգի բոլոր դերակատարների միջև: Նշված համաձայնագրերը պետք է սահմանեն տվյալների փոխանակման շրջանակը, ձևաչափը, պարբերականությունը և երաշխիքները՝ գաղտնիության պահպանմանբ համագործակցությունը խթանելու նպատակով:

9. Հատկացնել բավարար բյուջե և ռեսուրսներ՝ տվյալների համակարգերի արդիացման, տվյալների վերլուծության և հաշվետվողականության համար: Ֆինանսավորումը պետք է առաջնահերթ հատկացվի այն գործողություններին, որոնք բարելավում են արդարադատության ոլորտում գենդերազգայուն տվյալների որակը, ծածկույթը և հասանելիությունը:

C. Մասնակցություն և շարունակականություն

10. Պարբերաբար անցկացնել հարցումներ օգտատերերի շրջանում՝ գրանցելու արդարադատության համակարգին առնչվող անձանց տեսակետները: Կիրառել արդյունքները ծառայությունների մատուցման, իրազեկման ռազմավարության կամ ապացուցահեն բարեփոխումների մշակման համար:

11. դգրկել քաղաքացիական հասարակության կազմակերությունների և գիտաուսումնական հաստատությունների անձնակազմին տվյալների հավաքման մեթոդաբանությունների մշակման, թեստավորման և վերանայման աշխատանքներում: Նշված ներառական մոտեցումը նպաստում է ցուցանիշների արդի, վստահելի և փոփոխվող կարիքներին համահունչ մնալուն:

12. Պարբերաբար վերանայել ազգային ցուցանիշների համախումբը՝ ապահովելու, որ դրանք արտացոլեն արդարադատության ոլորտի արդի մարտահրավերները, օրենսդրական և միջազգային պարտավորությունների փոփոխությունները: Պարբերական թարմացումները նպաստում են համակարգի շարունակական արդիությանը և ճկունությանը:

Սույն հաշվետվությունը հանդիսանում է Արևելյան գործընկերության տարածաշրջանում արդարադատության համակարգին կանանց հասանելիությանն առնչվող գենդերազգայուն տվյալների հավաքման և կիրառման արդյունավետության բարելավմանն ուղղված տվյալահեն և գործնական ուղեցույց: Հիմնվելով ՄԱԿ Կանայք և Եվրոպայի խորհրդի «Արդարադատության հասանելիության չափման հիմքերը անդրադարձ կանանց առջև ծառացած հատուկ մարտահրավերներին» ուղեցույցի վրա՝ այն փոխակերպում է միջազգային չափորոշիչները գործառնական առաջարկների՝ համապատասխանեցված արդարադատության համակարգի հաստատություններին, վիճակագրական ծառայություններին և առընթեր պետական մարմիններին: Տվյալների հավաքման գործելակարգերի վերաբերյալ ուղեցույցը սահմանում է տվյալների բարձրորակ, էթիկական նորմերին համահունչ և ներառական հավաքման հիմնարար սկզբունքները՝ հատուկ ուշադրություն հատկացնելով դասակարգմանը, համադրելիությանը, միջգերատեսչական համակարգմանը և զգայուն տեղեկության պաշտպանությանը: Ուղեցույցը որոշարկում է տվյալների առաջնահերթ ոլորտները, նպաստող միջավայրի բնութագրիչ ցուցանիշները, արդարադատության համակարգի առաջարկի կողմը, արդարադատության համակարգին դիմելիս կանանց վերապրած փորձառությունները, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնության դեպքերը: Հիմնվելով Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի փորձագիտական տվյալների վրա՝ հաշվետվությունը անդրադառնում է ընդհանուր բացերին և լավագույն փորձին՝ առաջարկելով կոնկրետ քայլեր՝ ինստիտուցիոնալ կարողությունների, փոխգործունակության և հաշվետվողականության հզորացման ուղղությամբ: Ուղեցույցը նախատեսված է, որպես գործնական ռեսուրս, քաղաքականություն մշակողների, իրավաբանների, վիճակագրագետների և քաղաքացիական հասարակության գործիչների համար, որոնք հավատարիմ են վստահելի տվյալների մշակմանը՝ վերջիններիս հիման վրա և եվրոպական ու մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին համապատասխան բարեփոխումների իրագործման, առաջընթացի մշտադիտարկման և արդարադատության համակարգին կանանց հավասար հասանելիության խթանման նպատակով:

PREMS 111726

HYE

Եվրոպական միության անդամ պետությունները որոշում են կայացրել միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Անդամ պետությունները միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման տարածաշրջան՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պատրաստակամ է կիսվել իր ձեռքբերումներով և արժեքներով իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից